

**ՃԱՄՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՔ  
ՊԸՐՊԵՆՔԻ JOHN MUIR ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ**

Շաբաթ, Յունիս 26ի առաւօտեան ժամը 10:00ին Առաջնորդ Սրբազան Հօր Նախագահութեամբ եւ մասնակցութեամբ Առաջնորդարանի Երիտասարդաց Վարիչ՝ Աւետիս Քինյ. Արովեանի, Եղիա Աւագ Քինյ. Հայրապետեան եւ Գրիգոր Քինյ. Չաքարեանի, Պըրպէնքի John Muir Միջնկարգ Վարժարանին մէջ տեղի ունեցաւ աւելի քան 100 երիտասարդ-երիտասարդուհիներու մասնագիտական պատրաստութիւնը ճամբարի Յանձնախումբի կողմէ, որոնք ճամբարի չորս շաբաթներու տեւողութեան որպէս խորհրդականներ իրենց վստահուած կարելոր պարտականութիւնները պիտի կատարեն:

Բացման աղօթքը եւ խօսքը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը, գնահատեց Տէր Աւետիս Քահանայի, ճամբարի Յանձնախումբի եւ խորհրդականներուն ծառայութիւնները մեր փոքրիկներու դաստիարակութեան եւ հոգածութեան համար:

Առ ի գիտութիւն, ճամբարի չորս շաբթուան ժամանակացոյցն է.-

Յուլիս 18-24 առաջին շաբաթ

Յուլիս 25-31 երկրորդ շաբաթ

Օգոստոս 1-7 երրորդ շաբաթ

Օգոստոս 8-14 չորրորդ շաբաթ